



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հ Ր Ա Մ Ա Ն

« 03 » « *թեկտեմբեր* » 2020 թ. № *462-Ն*

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել ծառայողական քննություն լիզենցիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Է. Փիրումյանի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 19-ին ներկայացված զեկուցագրի հիման վրա ներկայացված փաստերի դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցերն են՝

- 1) Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված փիեկերում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիաներ ունեցող լիցենզավորված անձանց ցանկում անճշտությունների պատճառները:
- 2) Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի ղեկավարին ուղղված 2020 թվականի հոկտեմբերի 15-ի 2/10.1.6/11314 գրությամբ, ներկայացված հիմքերով մերժման պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝

- 1) Տիգրան Սիմոնյան – Նախարարի տեղակալ, խմբի ղեկավար,
- 2) Գրիգոր Գուլյան – Գլխավոր քարտուղար,
- 3) Խաչատուր Խաչատրյան – Իրավաբանական վարչության պետ,
- 4) Մերի Բաբայան – Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ,
- 5) Կարինե Քուշքյան – Քարտուղարության պետի տեղակալ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 15 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանն ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունն անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՆԱԽԱՐԱՐ

Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

12/3/2020

X



ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

« 03 » Յեկտեմբեր 2020թ.
ք. Երևան